

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀԱՅԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ (X-XIII ԴԴ.)

Բանալի բառեր – Վրաստան, Տիդիս, Քարթլի, Բագրատունիներ, Սմբատ I, Հովհաննես Դրասխանակերտցի, Դավիթ IV Շինարար, Հայոց եկեղեցի, հայկական համայնք, թագավոր, պատմիչ, եպիսկոպոսություն, գաղթօջախ, արձանագրություն

Վրաստանում Հայոց եկեղեցու և վրաց աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները պատմական ուրույն ընթացք են ունեցել, որոնք սերտորեն առնչվել են այդ երկրում հայկական գաղթօջախի ձևավորմանը, ինչպես նաև հայերի մասնակցությամբ՝ Վրաստանի սոցիալ-քաղաքական և տնտեսական-մշակութային կյանքի զարգացման գործընթացին: Վրաստանի հայ գաղթօջախին ու հատկապես վրաց աշխարհիկ իշխանությունների և այնտեղ գործող Հայոց եկեղեցու փոխհարաբերություններին որևէ ժամանակաշրջանի հայ պատմիչ և տարեգիր լիարժեք չեն անդրադարձել: VII-XIII դդ. հայկական և վրացական սկզբնաղբյուրների տեղեկություններն առավելապես վերաբերում են հայ բնակչության գաղթերին, ուստի առաջնային ենք համարում լուսաբանել սույն ժամանակաշրջանում Վրաստանում հայ բնակչության և Հայոց եկեղեցու թեմի պատմության մի շարք անցքեր:

Հայերի գաղթը դեպի Վրաստան պարբերական բնույթ է կրել: Այն ունեցել է իր նախադրյալները՝ պետականության կորուստը, առևտրական ճանապարհների հյուսիս տեղափոխվելը, վրացի թագավորների բարենպաստ քաղաքականությունը:

Նկատենք, որ Միացյալ վրաց թագավորության տնտեսությանը զարկ տալու, երկիրն արտաքին թշնամիներից պաշտպանելու, ինչպես նաև երկրի ներսում թագավորի և վրացի անջատողական ազնվականության միջև շարունակվող պայքարի պայմաններում Վրաստանի արքաները հանձինս հայերի՝ տեսնում էին թագավորական իշխանության համար վստահելի հենարան:

Վրաստանում հայկական գաղթօջախի ձևավորման գործընթացը զարգացել է աստիճանաբար: Եթե Հայաստանի առաջին բաժանումից հետո (387 թ.) Բյուզանդական կայսրությունում հայկական գաղթօջախը արդեն ձևավորման փուլում էր, ապա նույնը չի առնչվում Վրաստանին: Մակայն ինչպես Բյուզանդիայում, այնպես էլ Վրաստանում հայ գաղթականները ծավա-

լել են տարաբնույթ գործունեություն՝ աշխատանքային (առևտրականներ, արհեստավորներ, շինարարներ), ռազմաքաղաքական, հոգևոր և մշակութային:

Հայտնի է, որ IV-V դդ. հայկական առանձին խմբեր հաստատվել էին Վրաստանի մայրաքաղաք Մցխեթում և նրա շրջակա գյուղերում¹: VII դարի մեկ այլ ուշագրավ սկզբնաղբյուրի՝ ըստ Քարթլիում գտնվող Մցխեթի ս. Խաչ (Ջվարի) և Ատենի Սիռնի եկեղեցիներում պահպանված հայերեն արձանագրության, վրացական միջավայրում գործել են հայ անվանի շինարարներ²:

Հավանաբար հայ-վրացական դավանական միասնության շրջանում Տփղիսում եղել է փոքրաթիվ հայկական համայնք: Ուխտանես պատմիչը հիշատակում է Կիրակոս Տփղիսեցի քահանայի մասին. «Նա մեծաւ աշխատութեամբ գրեալ և թարգմանեալ ի մերս լեզու՝ ետ մեր գրով. վասն զի ինքն իսկ կարի քաջ գիտեր զգիր և զլեզու Վրաց»³: Կարծում ենք, որ այս հիշատակումը կարող է վկայել այդ ժամանակաշրջանում Տփղիսում հայկական եկեղեցու և տեղում հայ սպասավորների առկայության մասին:

V-XII դդ. ձեռագիր հիշատակարաններում հանդիպում ենք «1073 թ.»՝ Մկրտիչ քահանայի Տփղիսում ընդօրինակած Շարակնոցին. «Շարակնոց վայելուչ հին բոլորագիր»:

Այստեղ հարկ է անդրադառնալ XI դարին վերագրվող երկու կասկածելի աղբյուրագիտական վկայությունների: V-XII դարերի հիշատակարանների ժողովածուի հրատարակիչ Արտաշես Մաթևոսյանը նշում է մի ձեռագիր Շարակնոցի մասին («...Շարակնոց վայելուչ հին բոլորագիր»), որը 1073 թ. արտագրվել էր Տփղիսում. «Այս նույն թվականին Մկրտիչ քահանան «ի Փայտակարանի, ի մեծ քաղաքին, որ Տփխիս ասի, ընդ հովանեաւ կամակատար սուրբ Աստուածածնի և սուրբ Մարգսի... ի խնդրոյ Ամիրի, ի վայելումն որդւոյ նորա սարկաւագ Եզեկիէլի» ընդօրինակվում է մի Շարակնոց»⁴: Իսկ Տփղիսի հայկական եկեղեցիներին նվիրված իր մենագրության մեջ Պարույր Մուրադյանը, ամենայն հավանականությամբ վրիպմամբ, մի ձեռագրի ՌԽԲ թվականը վերձանել է 1093 թվականի⁵, որն իրականում 1593 թվականն է: Այդ ձեռագրում Կիլիկիո կաթողիկոս է հիշատակվում Ազարիա Ա Ջուղայեցին (1584-1601), ինչը ևս փաստում է, որ քննարկվող իրադարձություններն առնչվում են XVI դարին:

Ի դեպ, որոշ վերապահությամբ ենք վերաբերվում Շարակնոցի՝ 1073 թ.

¹ Տե՛ս **Մելիքսեթ-Քեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, Կ. Ս. Երևան, 1934, էջ 172:

² Տե՛ս **Մուրադյան Պ.**, Армянская эпиграфика Грузии, Картли и Кахети, Ереван, 1985, с. 63-70:

³ **Ուխտանես**, Հայոց պատմություն, Երևան, 2006, էջ 34:

⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 108:

⁵ **Մուրադյան Պ.**, Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները, Երևան, 2009, էջ 259:

ընդօրինակված լինելուն: Նկատենք, որ այստեղ հիշատակվող «Ամիր» անունը Հայաստանում գործածվել է միայն XIII դարից¹: Ուշագրավ է նաև, որ Շարակնոցում հիշատակվող եկեղեցիների՝ Կամակատար Մբ. Աստվածածնի և Մբ. Սարգիսի վերաբերյալ բացակայում է որևէ հարակից սկզբնաղբյուր, որը կփաստի X դարում դրանց գոյության մասին: Ավելին, երբ Ներսես Աշտարակեցին հարցում է կատարում Կամակատար Մբ. Աստվածածին և Մբ. Գևորգ եկեղեցու մասին, առաջնորդին ներկայացված նյութերի մեջ առկա է հետևյալ հիշատակությունը՝ «վաղ ուրեմն կառուցեալ յայսմիկ տեղի՝ յամի Տեառն 1356 թ.»², այն է՝ եկեղեցիները պետք է կառուցված լինեին XIV դարում: Իսկ արդեն 1452 թ. Հովհաննես անունով գրիչը «ի մայրաքաղաքս Տփղիս, ընդ հովանեաւ Կամակատար Սուրբ Աստուածածնիս»³ ընդօրինակում է Ավետարանը: Ուստի հաշվի առնելով, որ Շարականի⁴ բովանդակային տեղեկությունները չեն համապատասխանում նշված ժամանակաշրջանին՝ 1073 թ., կարծում ենք այն արտագրվել է ավելի ուշ՝ մասնավորապես XV դարում, իսկ նշյալ թվականը վրիպման հետևանք է:

Հայ ժողովրդի նոր գաղթականության հոսքը դեպի Վրաստան շարունակվեց նաև Հայաստանի՝ խալիֆայության գերիշխանության տակ ընկնելուց հետո, որի առաջացման պատճառը գլխավորապես Հայաստանի նկատմամբ խալիֆայության վարած բիրտ քաղաքականությունն էր: Հայերն իրենց մասնակցությունն էին ունենում Վրաստանում արաբների դեմ պայքարին: Այսպես, ըստ արաբ պատմիչ Թաբարիի՝ 853 թ. Տփղիսի պաշտպանների շարքում եղել են նաև խուբեցիներ, որոնց Տփղիսի քաղաքապետ Իսահակը կարգել էր պահակագործ⁵: Այս ժամանակաշրջանում հայ գաղթականների թվում էին նաև իշխանական տան ներկայացուցիչները: Ղևոնդ պատմիչի հաղորդմամբ՝ Արտավազդ Մամիկոնյանը հարկահավաքին սպանելուց հետո «համբառնայր ամենայն տամբ իւրով, գնայր ի կողմանս Վրաց աշխարհին և ընդ ամենայն նախարարք աշխարհիս»⁶:

Հայերի նոր հոսքը դեպի Քարթլի և հատկապես Քվեմո Քարթլի⁷, ավելա-

¹ Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1942, էջ 119:

² **Մուրադյան Պ.**, նշվ. աշխ., էջ 52:

³ «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մաս Բ (1451-1480), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 16:

⁴ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 228, վավ. 17:

⁵ Արաբացի մատենագրեր. Հայաստանի մասին, Վիեննա, 1919, էջ 100:

⁶ Պատմություն Ղևոնդեաց Մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 138:

⁷ «Մոմխիթի» կամ «Մոմխեթի» հորջորջումը, որով վրաց մատենագիտության մեջ հնագույն ժամանակներից մինչև XI դարը հայտնի էր Հայքը (Հայաստանը), թերևս Կյուրիկյանների շրջանում անցավ հարավային կամ ստորին Քարթլիին (մինչև Թելեթի կամ Սողանլուղի լեռնաշղթան Թբիլիսիի մոտ), ուստի և այս բնակավայրերը՝ հայեր և թե վրացիներ, «սոմխիթարի», այսինքն՝ «սոմխեթցի» էին կոչվում և աժմ ևս այդպես են կոչվում: Տե՛ս **Մելիքսեթ-Քեկ Լ.**, Հայերը Վրաստանում // «Кавказ и Византия», выпуск 1, Ереван, 1979, с. 175:

ցավ IX-X դարերում, երբ հայ Բագրատունիները հավակնություններ ներկայացրին այս տարածքների նկատմամբ: Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ X դարի սկզբներին Սմբատ I Բագրատունին (850-914) պայքար է սկսում արխազաց թագավոր Կոստանդին III-ի (899-982) դեմ, որի զորքերը ներխուժում են Վիրք, Ծանարք և Գուգարք: Արխազական զորքերը պարտություն են կրում, իսկ Կոստանդին III-ը գերեվարվում է¹: Սույն իրադարձության վերաբերյալ կարևոր տեղեկություններ է հաղորդում նաև Քարթլիի մատյանը, ըստ որի՝ Սմբատ I-ը գրոհով գրավում է Ուփլիսցիսե (ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Կոսիս) ամրոցը և ետ նվաճում Վիրքը²: Հովհաննես Դրասխանակերտցին հայտնում է, որ Սմբատը «գրագում ամրոցս յինքն գրաւեալ ի Վուրի աշխարհի, և կուսակալս կողմանցն այնոցիկ կացուցեալ է»³: Այսպիսով, Քվեմո Քարթլիի հարավային մասը՝ Սամշվիլդե կենտրոնով, գտնվում էր Բագրատունիների տարածքում և Սմբատ I-ը Քարթլիի կառավարումը վստահում է կուսակալներին:

Նույնը նա նախաձեռնել էր նաև Սամշվիլդեում՝ այստեղ կուսակալներ նշանակելով Գնթունիների տոհմից: Ուստի հավանական է, որ Քարթլիում ևս՝ մասնավորապես Ուփլիսցիսեում, պետք է գործեին Սմբատ I-ի ուղարկած հայ ազնվական տոհմի ներկայացուցիչները: Այս առումով հետաքրքրաշարժ է Աթենի Սիոնում հայտնված Եռհասանի որդի Գերջիումի՝ X դարի արձանագրությունը⁴: Գերջիումը հայտնում է, որ այցելել է Աթեն Ուփլիսցիսե՝ Բագրատ III-ի (1008-1014) կողմից գրավվելուց հետո: Ըստ Պ. Սուրադյանի՝ սույն հիշատակության ոճական և քերականական առանձնահատկությունները վկայում են, որ Գերջիումը երկար ժամանակ ապրել է քարթվելական մթնոլորտում, քանզի քաջիրազեկ է Ուփլիսցիսե տաճարի գրավման մանրամասներին, որը թույլ է տալիս ենթադրել, որ նա եղել է Ուփլիսցիսեի բնակիչ⁵: Լևոն Մելիքսեթ-Բեկը հավանական է համարում, որ հենց այս եկեղեցում է X դարում տեղի ունեցել Արխազաց թագավոր Կոստանդինի որդի Գիորգիի պսակադրությունը հայոց Սմբատ թագավորի դստեր հետ⁶:

XI-XIII դդ. հայերի գաղթը Վրաստան շարունակական բնույթ է կրում, որը պայմանավորված էր Հայաստանում անբարենպաստ իրադրություններով: 1045 թ. Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո Վրաստանը, մասնավորապես Քարթլին այն վայրն էր, ուր պատսպարվելու հույսով դիմում էր հայ բնակչությունը: Չնայած Վրաստանը ևս ենթարկվել էր

¹ «Մատենագիրք հայոց», հ. ԺԱ, Ժ. Դար, Պատմագրություն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 586:

² Карталис Цховреба, Тбилиси, 2008, с. 32.

³ Մատենագիրք հայոց, հ. ԺԱ, էջ 484:

⁴ Տե՛ս **Սուրադյան Պ.**, Աթենի Սիոնի նորահայտ հայերեն արձանագրություններ // «ՊԲՀ», 1979, թիվ 3, էջ 214-215:

⁵ Տե՛ս **Мурadian П.**, նշվ. աշխ., էջ 65:

⁶ Տե՛ս **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Հայերը Վրաստանում, էջ 172-173:

սելջուկ-թուրքերի հարձակումներին¹, այնուամենայնիվ վրաց իշխանություններին՝ հանձին Դավիթ IV Շինարարի (1089-1125), հաջողվում է երկիրը դուրս բերել ճգնաժամից:

Վրաստանում բուռն վերելք ապրեցին տնտեսության բոլոր ճյուղերը: Զարգացավ հողագործությունը, զգալիորեն ընդարձակվեց ոռոգման համակարգը, մի շարք ջրանցքներ կառուցվեցին Քարթլիում և Կախեթում²: Այս ամենում իրենց մեծ լուսան ունեցան հայ գաղթականները: Դավիթ IV Շինարարը երկրի տնտեսությանը զարկ տալու նպատակով խրախուսում էր հայ առևտրականների և արհեստավորների հոսքը Վրաստան: Ըստ Մատթեոս Ուռնայեցու՝ «սա (Դավիթ IV Շինարարը – *Լ. Մ.*) շինեաց քաղաք Հայոց յաշխարհն Վրաց և հաստատեաց եկեղեցիս և վանորայս բազումս, և անուանեաց զանուն Գոռա»³: Այսպիսով, Գորին բնակեցնելով հայ վաճառականներով և վարպետներով՝ Դավիթ IV Շինարարը այն դարձրեց խոշոր վաճառաշահ կենտրոն:

Նկատենք, որ Դավիթ IV Շինարարի կառավարման և հետագա տարիների ընթացքում հայ-վրացական հարաբերությունների կարևոր կողմերից է եղել հայոց եկեղեցին:

Քննարկվող ժամանակաշրջանում առանձնաբար հիշատակելի են Հովհաննես Սարկավագի⁴ և Դավիթ IV Շինարարի սերտ հարաբերությունները: Այս կապի մասին հիշարժան տեղեկություններ են պահպանվել «Քարթլիս Յխովրեբայի» հայկական տարբերակում. «Այլ ինքն (Դավիթ IV Շինարարը – *Լ. Մ.*) սիրէր զագգն Հայոց և զեկեղեցիսն և զուն հոետոր վարդապետ ի Հաղբատ՝ Սարկաւագ անուն. խոստովանէր նմա զյանցանս իւր, և կորացուցեալ զպատուական գլուխն՝ աւրինէր ի նմանէ...Եւ նստէր ընդ նմա և փարէր զպարանոցաւ նորա, և նա ասէր. «Լուծեալ եմ և հոտեալ ի ծերութենէս, ի բաց գնա յինէն՝ զի մի՛ աշխատ լինիցիս»⁵: Ակներն է, որ Հովհաննես Սարկավագը վայելում էր արքայի վստահությունը և միզուցե դարձել էր նրա խոստովանահայրը: Այս առումով հետաքրքիր է նաև Կիրակոս Գանձակեցու հիշատակումը՝ «եւ ի պատճառս սորա (Հովհաննես Սարկավագի) սիրէր թագաւորն զագգս Հայոց»⁶: Ըստ այդմ՝ կարելի է փաստել, որ Հովհաննես Սարկավագն իր հոգևոր գործունեության հետ մեկտեղ փորձում էր արքային ավելի բարյացակամ տրամադրել Վրաց թագավորության սահմաններում

¹ Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. II, Երևան, 2016, էջ 316-318:

² Տե՛ս նույն տեղում, էջ 326:

³ **Մատթեոս Ուռնայեցի**, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 356:

⁴ Հովհաննես Սարկավագի գործունեությունը հիմնականում կապված է Հաղբատի վանքի հետ: Տե՛ս **Մելիքսեթ-Քեյ Լ.**, «Վարդապետք հայոց հիւսիսային կողմանց» և նրանց ինքնությունը, Ս. Էջմիածին, 2016, էջ 131-170:

⁵ «Քարթլիս Յխովրեբա» կամ «Վրաց պատմություն» հին հայերեն թարգմանությունը, ուսումնասիրությամբ Ի. Աբովաձեի, Թբիլիսի, 1953, էջ 255:

⁶ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 114:

բնակվող հայության նկատմամբ: Կարևոր է նկատել, որ Հովհաննես Սարկավազը վայելում էր ոչ միայն Դավիթ IV Շինարարի հարգանքը, այլև մեծ հեղինակություն ուներ վրացական միջավայրում: Այդ մասին է հավաստում նրա «Վասն շարժման և սասանութեան» աշխատությունը՝ գրված ի պատասխան վրացի հոգևորականի հարցադրմանը¹:

Վիմագիր և գրավոր սկզբնաղբյուրներից տեղեկանում ենք, որ Դավիթ IV Շինարարը բարեխնամություն է ցուցաբերել հատկապես «Հիւսիսային կողմանց հայոց վարդապետներին»², մասնավորապես Հաղբատ և Սանահին վանքերի նկատմամբ: Ըստ Հաղբատի Սր. Նշան եկեղեցու արևմտյան մուտքի ճակատին պահպանված մի արձանագրության՝ «ի ձեռն Դավիթ Շինարարի», Հաղբատը, և Սանահինը ապահարկ դարձան և այդ վանքերին նվիրվեց «գեաւոյ առընթեր»³: Հայրապետ Սարգարյանի դիտարկմամբ՝ XII դարի վրացի եկեղեցական ավատատերերը, օգտվելով թագավորական իշխանության և ֆեոդալական ազնվականության միջև հակամարտությունից, ձեռք էին բերում հարկային անձեռնմխելիություն⁴: Կարծում ենք՝ հայկական վանքերը ևս օգտվեցին այդ իրավիճակից, իսկ Դավիթ IV Շինարարը, հանձինս հայ եկեղեցական ավատատերերի, ձեռք բերեց ամուր հենարան:

Այժմ փորձենք պարզել, թե արդյո՞ք Դավիթ IV Շինարարի և նրա հաջորդների օրոք Վրաստանում եղել է դավանանքների հավասարություն:

Հայտնի է, որ 1103 թ. Դավիթ IV Շինարարի ջանքերով գումարված Ռուխ-Ուրբնիսի եկեղեցական ժողովն ընդունեց մի շարք որոշումներ, որոնց հետևանքով վրաց եկեղեցին ստիպված էր ենթարկվել պետության վերահսկողությանը⁵: Ժողովի ընթացքում ընդունված XII և XIII կանոնները վերաբերում էին հայոց եկեղեցուն. «[Կանոն] 12... հերձվածողներից խաչեցարները հայերն են... Սրանց մասին սահմանում ենք, վոր [ուղղափառություն ընդունելու դեպքում] սրանց լիովին մկրտեն ինչպես հեթանոսներին. Վորովհետև գտանք, վոր այլ մեծ յեկեղեցիներն այսպես են անում, ինչպես որինակ Անտիոքի պատրիարքական աթոռն ու նրան հետևող ամբողջ արևելքի յեկեղեցիները»⁶: Այս կետերը հակասական են դարձնում այն տեսությունը, թե քննարկվող ժամանակաշրջանում վրաց իրականության մեջ կար հավասարություն

¹ Տե՛ս **Սուրադյան Պ.**, «Վրաց պատմության» հայերեն թարգմանության գնահատության հարցի շուրջ // «Էջմիածին», 2008, թիվ 2-Է, էջ 97:

² «Հիւսիսային կողմանց հայոց վարդապետներ» հասկացության բացատրությունը տե՛ս **Մելիքսեթ-Բեկ Լ.**, «Վարդապետը հայոց հիւսիսային կողմանց» և նրանց ինքնությունը, էջ 40-46:

³ Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Երևան, 1963, էջ 144-145:

⁴ Տե՛ս **Մարգարյան Ա.**, Феодальный иммунитет и процесс закрепощения крестьянства в Армении и Грузии в XI-XIII веках // «Кавказ и Византия», выпуск 4, Ереван, 1984, с. 19-20:

⁵ Տե՛ս **Աբաшидзе Յ.**, Диархия Давид Строителя, Тбилиси, 2010, с. 30:

⁶ **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, էջ 124:

դավանանքների միջև: Ըստ վրացի հետազոտող Մ. Լորթքիփանիձի՝ վրացի պետական գործիչները հասկանում էին, որ հայոց և վրաց եկեղեցիների միությունը ամուր հիմքեր կստեղծեր հետագայում հայ-վրաց քաղաքական հարաբերությունների ամրապնդման համար: Բայց քանի որ վրացական իշխանության նախաձեռնությունները կհանդիպեին մեծ դիմադրության, նրանք ստիպված էին գործել զգույշ և պաշտոնապես վարել «դավանական հանդուրժողականության քաղաքականություն»: Ինչպես նշում է վրացի հեղինակը, այս քաղաքականությանը զուգահեռ՝ վրացական իշխանությունները շատ զգույշ, սակայն հետևողական փորձում էին քաղկեդոնական ուսմունքի հետևորդ դարձնել քրիստոնեության այլ ուղղությունների, ինչպես նաև այլ ուսմունքների հետևորդներին¹: Հայտնի է, որ Դավիթ IV Շինարարի անմիջական մասնակցությամբ և նախաձեռնությամբ 1123-1125 թթ. հրավիրվում է հայ և վրացի վարդապետների ժողով²: Այստեղ կողմերը կրկին վիճել են աստվածաբանական հարցերի շուրջ, փորձել հիմնավորել իրենց հավատքի ուղղափառությունը: Անուրջ է ենթադրել, թե ժողովից առաջ Դավիթ IV Շինարարը տեղյակ չի եղել վրացի հոգևորականների տրամադրվածությանը և նպատակներին: Ըստ այդմ՝ կասկածի տեղիք է տալիս ժողովը հրավիրված է եղել հայ և վրաց հոգևորականներին հաշտեցնելու, թե՛ հայերին դեպի ուղղափառություն տանելու նպատակով: Կարծում ենք, բախումները և թշնամանքը երկու եկեղեցիների միջև պայմանավորված են եղել ոչ միայն դավանանքի տարբերությամբ, այլև տիրող աշխարհիկության մթնոլորտով:

Դավիթ IV Շինարարի վարած կրոնական քաղաքականության հիմնական դրդապատճառների մասին լիակատար պատկերացում կազմելու համար բավական է համեմատել վրաստանաբնակ հայերի և մուսուլմանների կացությունը: Դավիթ IV Շինարար թագավորը 1122 թ. Տփղիսը գրավելուց հետո մուսուլմանությունը հռչակեց անձեռնմխելի կրոն, իսկ մյուս կրոնների հետևորդներին արգելվում էր այցելել մուսուլմանների բաղնիքներ և խոզ մորթել այն հատվածում, որտեղ ապրում էին իսլամ դավանողները³: Մուսուլմանների արտոնյալ դիրքը պայմանավորված էր թե՛ Տփղիսում և թե՛ Արևելյան Վրաստանի քաղաքների մեծ մասում նրանց երկարատև գերիշխանությամբ և դիրքերի ամրությամբ: Բացի այդ՝ մուսուլմանական հզոր պետությունների հետ առճակատում ոչ մի չափով ընդգրկված չէր վրաց թագավորների ծրագրերում: Որոշակի դեր ունեին նաև տնտեսական գործոնները. Վրաստանով անցնող առևտրական ուղիների վերահսկողությունը

¹ Տե՛ս **Лордкипанидзе М.**, История Грузии, Тифлис, 1967, с. 116:

² Տե՛ս **Մելիքսեթ-Բեկ Լ.**, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» և նրանց ինքունությունը, վրացերենից թարգմ.՝ Հր. Բայրամյան, Էջմիածին, 2016, էջ 145:

³ Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Ֆարիկի «Նփրկերտի պատմությունը» (ԺԲ դար) Հյուսիսային Հայաստանի դեպքերի մասին // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 6, Արաբական երկրներ, Երևան, 1974, էջ 199:

պատկանում էր մուսուլման վաճառականներին:

Կարելի է կարծել, որ XII-XIII դդ. կրոնների ու դավանանքների հավասարությունն ամեննին բնորոշ չի եղել Վրաստանին: Թագավորական իշխանությունը ձգտել է հեզեմոն դիրք ապահովել վրացական եկեղեցու համար, իսկ մուսուլմանությանը շնորհել է առանձնահատուկ արտոնություններ՝ ելնելով իր քաղաքական ու տնտեսական շահերից: Կրոնական հանդուրժողականությունը չի կարելի բնութագրական համարել հատկապես վրաց հոգևորականության և հասարակության լայն շերտերի համար:

Եթե հավատանք արաբ պատմիչ Բար-Շեբեոսին, ապա XII դարում Տփղիսում հայերի թիվը հասնում էր 40.000-ի: Վրաստանում, հայկական բնակչության սովորացմանը զուգահեռ, տեղում հայկական թեմի կազմավորման անհրաժեշտություն էր առաջանում:

Մեզ հայտնի առաջին թեմակալ առաջնորդը Բարսեղն է, որը հիշատակվում է նաև որպես Հաղբատի վանքի եպիսկոպոս¹: Ակադեմիկոս Մուրեն Երեմյանը Հաղբատի Բարսեղ եպիսկոպոսին նույնացրել է Կապտավանքի և Ադրեա առաքյալի սրբապատկերի շրջանակի արձանագրություններից հայտնի Աբուլասանի, ըստ նրա՝ նույն իր՝ Քուրդ Մահկանաբերդցու եղբայր Բասիլիի հետ (Աբուլասանի եղբայր Բասիլը, հետագայում ընդունելով ուղղափառություն, զրկվել է իր պաշտոնից և հաստատվել Թամար թագուհու արքունիքում որպես «Քարթլիի նախկին արքեպիսկոպոս»²): Մակայն հետագայում, Ն. Մարգարյանի ճշգրտմամբ, երկու Բարսեղների նույնացումն անկարելի դարձավ, քանի որ Հաղբատի առաջնորդ և Վրաստանի սահմաններում ապրող հայերի արքեպիսկոպոս Բարսեղը բոլորովին այլ՝ Ուքանանց տոհմից է³: Այս առումով ուշագրավ է, որ 1179 թ. տեղի ունեցած Հռոմկլայի ժողովում Բարսեղը եպիսկոպոսների շարքում հիշատակվում է «*Բասիլիոս արքեպիսկոպոս թագաւորանիստ քաղաքի վրաց Տիխեսաց*» ձևով⁴: Այս հիշատակումը հուշում է մեզ, որ թեմի վարչական կենտրոնը դարձել էր Տփղիսը, իսկ 32 եպիսկոպոսների շարքում Բարսեղ VII-ին հիշատակելը վկայում է նրա բարձր դիրքի և հեղինակության մասին:

Վրաստանում, մասնավորապես՝ Տփղիսում, հայկական թեմն ուներ առաջնորդանիստ եկեղեցի: Հայտնի է, որ 1251 թ. մեծահարուստ Ումեկին կառուցում է «Բերդի մեծ եկեղեցին»՝ ներկայիս Ս. Գևորգ եկեղեցին, որը

¹ «Հայերեն ձեռագրերի հիտակարաններ. Ե-ԺԲ դդ.», աշխատասիրությամբ Ռ. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 206-207:

² Տե՛ս **Еремян С.**, Юрий Боголюбовский в армянских и грузинских источниках // «Պետական համալսարանի գիտական աշխատություններ», հ. XXIII, Երևան, 1946, էջ 405:

³ Տե՛ս **Մարգարյան Ն.**, Միջֆեոդալական պայքարը Գեորգի III-ի ժամանակ և Քուրդ ամիրապետը // «ԼՀԳ», 1975, թիվ 11, էջ 56: Հիշյալ տոհմի մասին տե՛ս նաև **Ն. եպս. Օովական**, Ուքանանց տոհմացուցակը // «Միոն», 1964, թիվ 10, էջ 263-264:

⁴ **Լեքսես Շնորհալի**, Թուրթ ընդհանրական, Էջմիածին, 2009, էջ 105:

դարձավ եպիսկոպոսանիստ եկեղեցի¹: Փորձենք պարզել, թե մինչև XIII դարը ո՞ր եկեղեցին կարող էր լինել եպիսկոպոսանիստ: Այսպես, Տփղիսի հնագույն եկեղեցիներից է «Քառասնից եկեղեցին», որը սկզբնաղբյուրներում հիշատակվում է նաև «Բերդի փոքր եկեղեցի» անվանափոխությամբ²: Արաբ պատմիչ Բար-Հերբեռուսի (նույն Աբուլ-Ֆարաջի) հիշատակումից տեղեկանում ենք, որ 1197 թ. Ծրագատկի տոնի հետ կապված վեճի արդյունքում վրացիներն այրում են հայկական եկեղեցին, որը, Լ. Մելիքսեթ-Բեկի ճշգրտմամբ, նույն «Քառասնից եկեղեցին է»³: Այն փաստը, որ Ծրագատկի տոնին հայերը հավաքված են եղել «Քառասնից եկեղեցում», և հենց այս եկեղեցին է այրվել, թույլ է տալիս եզրակացնել, որ այն եղել է ժամանակի կարևոր կենտրոններից մեկը: Ավելին, արդեն 1238 թ. Տփղիսում հաստատված Վանական վարդապետի ինքնագրով պահպանված հիշատակարանի հաղորդմամբ՝ «Ես՝ Վանականս, գրեցի իմով ձեռամբս ի Տփղիս քաղաքի, ի դրան Մուրբ Քառասնիցս, զի գերելա էր Աւետարանս ի Տաւրչոյ ի Մուղան ի թաթարէն և ետ երից ամաց աստ բերեալ անվանս վաճառեցին ՈՁԷ (1238 թ.) թուիս, զոր փառաւոր աւագերէց Սարգիս, հասարակ պատուական քահանայիւք և աստուածաւեր ժողովրդական տանուտէրաւք, բազում ծախաւք և աշխատութեամբ գնեալ ետուն մեզ»⁴: Վանականի գործածած արտահայտությունները՝ «փառաւոր աւագերէց», «պատուական քահանայիւք», թույլ են տալիս պնդել, որ XIII դարում ևս «Քառասնից եկեղեցին» առաջատար կառույց էր: Ըստ Պ. Մուրադյանի՝ «Բերդի փոքր եկեղեցի» կոչվելը հուշում է, որ այդ անունը կարող էր ձևավորվել «Բերդի մեծ եկեղեցու» կառուցումից հետո⁵:

Կարծում ենք, անունների նույնականությունը չնչին փոփոխությամբ նույնպես մատնանշում է եկեղեցիների մեկը մյուսին փոխարինելու մասին: Արդ, վերոգրյալ փաստերը պարփակելով՝ կարելի է պնդել, որ մինչև 1251 թ., այսինքն՝ «Բերդի մեծ եկեղեցու» կառուցումը, «Բերդի փոքր եկեղեցին», այն է՝ «Քառասնից եկեղեցին», Վրաստանում եղել է հայկական թեմի առաջնորդարանը:

1180 թ. Բարսեղ եպիսկոպոսը շրջաբերական է ներկայացնում վրացի թագավոր Գեորգի III-ին (1156-1184)՝ վերականգնելու Հաղբատի առաջնորդական վիճակը, որը, ամենայն հավանականությամբ, կորցրել էր Օրբելյանների իշխանական տան անկումից հետո: Այս շրջաբերականի մասին տեղեկանում ենք Հաղբատի վանքի Մբ. Նշան եկեղեցու արևմտյան մուտքի

¹ Տե՛ս **Մուրադյան Պ.**, Թիֆլիսի հայոց եկեղեցիները, էջ 34-39:

² Տե՛ս նույն տեղում, էջ 30:

³ Տե՛ս **Մելիքսեթ-Բեկ Լ.**, О междоусобице в 1197 году по поводу Кривой пасхи // **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Источниковедческие заметки: (сборник), Ереван, 2010, с. 17:

⁴ «Հայերեն ձեռագրերի հիտակարաններ. ԺԳ դ.», աշխատասիրությամբ Ռ. Մաթևոսյանի, Երևան, 1984, էջ 203:

⁵ Տե՛ս **Մուրադյան Պ.**, Թիֆլիսի հայոց եկեղեցիները, էջ 31:

կամարի վրա պահպանված արձանագրությունից, ըստ որի՝

*«Յամս Ա(ստուած)ագաւր եւ Ք(րիստո)սասէր թագաւորին Գեորգեայ, որ-
դոյ թագաւորին Դաւթի, եւ Բարսեղ, առաջնորդ տանս Հաղբատայ հանդերձ
վարդապետաւք ... ի նմանէ եւ ի մեծամեծաց նորա ցուցաք գ...տութիւն եւ
զվիճակաց... շրջաբերականսն ած ի նոցա կամանսն էարկ... սն զմեր ինդրելիին
հա(ստատեցին) զհարեանց պապանցն զհրամանսն եւ գոր... ժամուս ոմանք
յանոպայիցն... նկունն առնելով զնոսա դարձոյց յեկեղեցիս զվիճակագոր-
ծաց... Ա(ստուա)ծ պահեսցէ զթագաւորութիւնն Գեորգեայ եւ ս(ր)բոց թագա-
ւորացն մասնակից արասցէ: Ով հակառակ կա վիճակիս, որոշեալ լիցին ի
փառաց որդոյն Ա(ստուծոյ): Ի թվիս ՈԻԹ (1180 թ.)»¹:*

Նկատենք, որ շրջաբերականը հաստատման է ներկայացվել անձամբ
Գեորգի III-ին, ով Բարսեղին ամենայն հավանականությամբ կարգել էր ամ-
բողջ վրաց թագավորության սահմաններում ապրող հայության եպիսկոպոս,
նամանավանդ որ վերջինիս եղբայրներն արդեն վայելում էին վրաց ար-
քունիքի վստահությունը: Այդ մասին է վկայում նաև Կիրակոս Գանձակեցին,
որն անդրադարձնալով ավելի ուշ շրջանի XIII դարի դեպքերին, նշում է, որ
«Հաղբատ ի վրաց թագավորների հաշվին էր»²:

XII դարի կեսերից սկսած՝ ակտիվանում է հայերի դերակատարությունը
Վրաստանի ռազմաքաղաքական կյանքում:

Վրաստանի հայոց թեմի՝ մեր արդեն իսկ հիշատակած առաջնորդ Բարսեղ
եպիսկոպոսի եղբայրները (Ուքանանց տոհմի ներկայացուցիչները) ծառայու-
թյան մեջ են եղել վրաց արքունիքում: Հաղբատում պահպանված արձանագրու-
թյուններից մեկում Բարսեղի եղբայր Նաջմաղինը հաղորդում է, որ «*Գեորգի և
Թամար թագուհուն վասն մեր շատ ծառայութեան զԾորի սիգերով մեզ էին
տվեալք*», ապա նշում, որ իրենց կողմից Ջաքսոնք շինականը և Կեչուտին այգին
նվիրել են Հաղբատա վանքին³: Այս առումով արժեքավոր է Կիրակոս Գանձա-
կեցու վկայությունը՝ «*սա էր (Հաղբատի Բարսեղ) այր զեղեցիկ տեսեամբ. զսա
տեսեալ թագուհին Վրաց Թամարն, մեծապէս պատուեաց զնա վասն վայելչու-
թեան զեղոյ նորա, զի և եղբայրք նորա գործակալք էին տանն արքունիք*»⁴:
Փաստորեն, Կիրակոս Գանձակեցին ևս վկայում է վրացական արքունիքում
Բարսեղի եղբայրների՝ գործակալներ լինելու մասին և նշում, որ նաև դրանով
էր պայմանավորված Բարսեղի նկատմամբ վրաց արքունիքի բարյացակամ
վերաբերմունքը: Կարելի է ենթադրել, որ վրացի թագավորներն այս կերպ
փորձում էին ստեղծել իրենց հավատարիմ շրջանակ բոլոր բնագավառներում:

1176-1177 թթ. Գեորգի Գ-ի դեմ Իվանե Օրբելիի կազմակերպած ապս-
տամբության մասնակիցներից շատերը, այդ թվում՝ Սարգիս Ջաքարյանը իր

¹ Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 143:

² Կիրակոս Գանձակեցի, էջ 98:

³ Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 231:

⁴ Կիրակոս Գանձակեցի, էջ 98:

որդիների և եղբորորդու հետ, անցնում են թագավորի կողմը՝ դրա համար ստանալով պարգևներ: Հետագայում վրաց արքունիքում Ջաքարյանների նկատմամբ ձևավորվում է մեծ վստահություն: Նրանք նշանակալի ներդրում են ունենում Թամար թագուհու՝ ազգությամբ ռուս ամուսնու՝ Գեորգիի ապստամբությունը ճնշելու գործում: Թամարի օրոք Մարգիս Ջաքարյանը ստանձնում է ամիրսպասալարի պաշտոնը, որը 1187 թ. Ջաքարեին է հանձնվում: Իվանեին տրվում է գործակալությունը (մսախորթուխուցեստբա), իսկ Ջաքարեի մահից հետո նա վերցնում է աթաբեկությունը՝ փաստացի ձեռք բերելով արքային գրեթե համահավասար իշխանություն¹:

XIII դարի 30-ական թվականները Հայաստանի համար բնորոշ են նաև հայկական նոր արտագաղթով Վրաստան, որն իր ընգրկմամբ և ծավալով ավելի մեծ էր, քան սելջուկյան ժամանակաշրջանի արտահոսքը:

Մոնղոլների իշխանության հաստատումից հետո առևտրատնտեսական տարանցիկ ուղիները հարավից տեղափոխվում են հյուսիս՝ Կասպյան Թուրքմենիայից Խիվա և Մարայ՝ դեպի Սև ծովի հյուսիսային նավահանգիստ, և Հայաստանով դեպի Տրապիզոն²: Այս հանգամանքը և մոնղոլ կառավարիչների հատուկ վերաբերմունքը հայ առևտրականների նկատմամբ խթանում են նրանց հոծ ներգաղթը Վրաստան: Մոնղոլ կառավարիչները լայն իրավունքներ էին շնորհում առևտրավաշխառուական ազդեցիկ տոհմերին, որոնց շարքում էին նաև հայկական տոհմերը՝ Ումեկյանները, Շադինյանները:

Հայտնի է, որ Ումեկյան տոհմի ամենանշավոր ներկայացուցիչն էր Ումեկը, որ Կարին քաղաքի խոշոր վաճառականներից էր և գաղթել էր Տիֆլիս՝ շարունակելով իր առևտրական գործունեությունը Վրաստանում³: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Ումեկը «հայր անուանեալ թագաւորին Վրաց Դաւթի, և մեծարեալ ի դանէն գրով և յամենայն աւագանոյն: Մա առատ տուրս ետ Արդունին և որ ընդ նմա, մեծարեցաւ յոյժ ի նոցունց»⁴: Փաստորեն, Ումեկն առատ նվերներ է տալիս Արդունին և իր շրջապատի հետ արժանանում նրա մեծարանքին:

Մյուս կարևոր հանգամանքն առնչվում է հայ առևտրականների քաղաքական գործունեությանը, որոնց շարքին էր դասվում Շադինը կամ Շնորհավորը՝ Շադինյանների տոհմից: Վրացի հետազոտողներից Շ. Մեսխիան

¹ Տե՛ս **Մարգարյան Հ.**, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980, էջ 187-188, *նույնի*՝ Ջաքարյանների ծագումը // «ՊԲՀ», 1994, թիվ 1-2, էջ 154-175: Այս մասին տե՛ս նաև **Բաքարյան Լ.**, Ջաքարյանների ֆեոդալական իշխանության առաջացման հարցի մասին // «ՊԲՀ», 1962, թիվ 1, էջ 106-123, **Շահնագարյան Ա.**, Ջաքարյանների ծագումնաբանությունը // «Լրաբեր», 2001, թիվ 1, էջ 41-60, *նույնի*՝ Ջաքարյանների ազատամարտի առաջին փուլը // «Հայոց պատմության հարցեր» (գիտական հոդվածների ժողովածու – 6), 2005, թիվ 9, էջ 132-147:

² Տե՛ս **Манандян А.**, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, с. 285-286:

³ Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 363:

⁴ Նույն տեղում:

նույնացրել է Շադինին Ումեկի հետ, սակայն հետագայում, Շ. Մարգարյանի ճշգրտմամբ, այս երկու անձանց նույնացումը անկարելի դարձավ, քանի որ Շադինը լիովին այլ ազնվական տոհմից էր¹: Ըստ Վարդան պատմիչի՝ Շադինի վերահսկողության տակ էր նաև Հյուսիսային Հայաստանը²:

Այս փուլում մեծ ուշադրության է արժանի նաև մոնղոլ կառավարիչների վերաբերմունքը հայ եկեղեցու նկատմամբ: Հայտնի է, որ մոնղոլ կառավարիչների օրոք Ումեկի նախաձեռնությամբ Տփղիսում կառուցվում են երկու հայկական՝ Սբ. Գևորգ (1251) և Շահբադդինի (1267) եկեղեցիները: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ մոնղոլները հայ եկեղեցականներից ոչ մի հարկ չեն վերցնում, որովհետև, ինչպես հայտնում է պատմիչը, Արդուն խանից հրաման չունեին³: Փաստորեն, վերոնշյալ եկեղեցիներն ապահարկ էին: Ուշագրավ է, որ 1264 թ. Հուլալու խանը վարդապետների հետ իր մոտ է հրավիրել Տփղիսի Տերտեր վանականին, որը հայտնի է նաև Հաղբասի վանքի արձանագրություններից⁴: Ա. Երիցյանի կարծիքով՝ Տերտերի այցելությունը պայմանավորված էր հարկերի խստությամբ, և վերջինս գնում էր «թաթարաց Հուլալու խանի ողորմութիւնը խնդրելու»⁵: Սակայն կարծում ենք, սա ոչ թե ապահարկության խնդիրը լուծելու միջոց էր, այլ Հուլալու խանը, հրավիրելով նաև Տերտերին, փորձում էր համակիրներ ձեռք բերել հայոց եկեղեցու շրջանում:

Ըստ այդմ՝ նմանօրինակ մեղմացումները պայմանավորված էին մոնղոլ խաների և հայ աշխարհիկ իշխանությունների փոխհամագործակցային հարաբերություններով և Վրաստանում հայոց եկեղեցին իրենց նեցուկը դարձնելու ձգտումով: Մոնղոլ կառավարիչների բարյացակամ վերաբերմունքի մասին է վկայում նաև Վրաստանում, մասնավորապես Տփղիսում հայ բնակչության սովարացման փաստը: Այսպես, ըստ ճանապարհորդ Մարկո Պոլոյի՝ «այս հողում (Վրաստանում – *Լ. Մ.*) կա սքանչելի մի քաղաք Տփղիս անունով: Նրա բնակիչներ են՝ քրիստոնյաներ՝ հայեր և վրացիներ, կան նաև մի քանի մուսուլմաններ և հրեաներ, վեջիններս շատ քիչ են»⁶:

Այսպիսով, Վրաստանում հայ բնակչության սովարացմանը և Վրաստանի կառավարիչների հետ վերջիններիս փոխշահավետ հարաբերությունների ձևավորմանը զուգահեռ՝ այստեղ իր դիրքերն է ամրապնդում նաև հայոց եկեղեցին: Այս ամենի արդյունքում կազմավորվում է Վրաստանի Հայոց եկեղեցու թեմը, որ հաջողությամբ ներգրավված էր Վրաստանի կառավարիչների իշխանության մեջ:

¹ Տե՛ս **Маргарян А.**, К вопросу о личности и деятельности некоего Шагина // «Кавказ и Византия», выпуск 3, Ереван, 1982, с. 64:

² Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 155:

³ Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 363:

⁴ Տե՛ս **Ղաֆաղարյան Կ.**, նշվ. աշխ., էջ 60: **Երիցյան Ա.**, Թիֆլիսի հայք եւ նոցա վիճակագրութիւնը // «Փորձ», 1879, հոկտեմբեր, էջ 9:

⁵ **Երիցյան Ա.**, նշվ. աշխ., էջ 9:

⁶ **Марко Поло**, Путешествие, перевод со французского И. Минаева, Ленинград, 1940, с. 165.

Լիլիթ Մելիքյան – Հայոց եկեղեցին և հայերը Վրաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում (X-XIII դդ.)

Սույն հոդվածը նվիրված է հայոց եկեղեցու կարգավիճակին Վրաստանում՝ հայկական գաղթօջախի ձևավորմանը զուգահեռ: Ներկայացվում է Վրաստանում հայերի ունեցած տնտեսական և քաղաքական դերը, քննարկվում են Վրաստանում հայոց եկեղեցու թեմի կազմավորման մի շարք հիմնահարցեր, ինչպես նաև վրաց աշխարհիկ իշխանությունների և հայոց եկեղեցու սպասավորների փոխհարաբերությունները: Մի կողմից շեշտվում է, որ Վրաստանում հայոց եկեղեցու կարգավիճակը պայմանավորված է տեղում հայկական համայնքի ունեցած կշռով, մյուս կողմից՝ պարզաբանվում է վրացի թագավորների դավանական քաղաքականությունը:

Лилит Меликян – Армянская церковь и армяне в социально-экономической и политической жизни Грузии (X-XIII вв.)

Ключевые слова – Грузия, армянской церкви, армянская община, экономическая и политическая роль армян, грузинская светская власть, служители армянской церкви, религиозная политика

Данная статья посвящена статусу армянской церкви в Грузии и формированию армянской общины. Представлена экономическая и политическая роль армян в Грузии, рассмотрен ряд вопросов по формированию епархии армянской церкви, а также взаимоотношения грузинских светских властей и служителей армянской церкви. С одной стороны, подчеркивается, что статус армянской церкви в Грузии обусловлен авторитетом армянской общины, а с другой – проливается свет на религиозную политику грузинских царей.

Lilit Melikyan – The Armenian Church and Armenians in the Socio-Economic and Political Life of Georgia (X-XIII Centuries)

Key Words – Georgia, Armenian Church, Armenian community, economic and political role of Armenians, power of the Armenian community, ministers of the Armenian Church, secular authorities, status, religious policy

This article discusses the status of the Armenian Church in Georgia in parallel with the formation of the Armenian community. The economic and political role of Armenians in Georgia is presented, a number of issues related to the formation of the Diocese of the Armenian Church in Georgia, as well as the relations between the secular authorities of Georgia and the ministers of the Armenian Church, are discussed. On the one hand, it is emphasized that the status of the Armenian Church in Georgia is conditioned by the power of the Armenian community in the country, on the other hand, the religious policy of the Georgian kings is presented.

Լիլիթ Մելիքյան – ԵՊՀ հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դասախոս (lilit777.az@gmail.com)

Ներկայացվել է 27.08.2021

Գրախոսվել է 10.09. 2021

Ընդունվել է տպագրության 30.11.2021